ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ԱՊՀ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ԽԱՂԱՂ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ԱՏՈՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

հիմնվելով 1992թ. հունիսի 26-ի՝ "Ատոմային էներգիայի խաղաղ նպատակներով օգտագործման բնագավառում համագործակցության հիմնական սկզբունքների մասին" համաձայնագրի, 2007թ. սեպտեմբերի 14-ի՝ "Ատոմային էներգիայի խաղաղ օգտագործման բնագավառում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների տեղեկատվական ռեսուրսների ձեւավորման ու փոխանակման եւ տեղեկատվական համակարգերի ստեղծման ու զարգացման համագործակցության մասին" համաձայնագրի, Անկախ Պետությունների Համագործակցության՝ մինչեւ 2020 թվականն ընկած ժամանակահատվածի տնտեսական զարգացման ռազմավարության վրա՝ հաստատված 2008 թ. նոյեմբերի 14-ի՝ Անկախ Պետությունների Համագործակցության պետությունների կառավարությունների ղեկավարների Խորհրդի որոշմամբ, ԱՊՀ մասնակից պետությունների՝ ատոմային էներգիայի խաղաղ օգտագործման բնագավառում մինչեւ 2020 թվականն ընկած ժամանակահատվածի համագործակցության վերաբերյալ "ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ "ԱՏՈՄ-ԱՊՀ"" շրջանակային ծրագրի վրա՝ ընդունված 2011թ. մայիսի 19-ի՝ ԱՊՀ կառավարությունների ղեկավարների Խորհրդի որոշմամբ,

հաշվի առնելով ատոմային բնագավառի նշանակալի դերը ԱՊՀ մասնակից պետությունների տնտեսական եւ սոցիալական զարգացման մեջ,

ընդունելով ԱՊՀ մասնակից պետությունների՝ ատոմային բնագավառում համակարգված աշխատանքների ապահովման կարեւորությունը,

հաշվի առնելով ԱՊՀ մասնակից պետությունների՝ ատոմային բնագավառում արդիական հարցերի արդյունավետ լուծման համատեղ շահագրգռվածությունը,

ելնելով միջուկային եւ ճառագայթային անվտանգության ամրապնդման անհրաժեշտությունից՝ նորմատիվ իրավական գործիքների կատարելագործման եւ նորարարական տեխնոլոգիաներին անցման միջոցով՝ կայուն զարգացման, չտարածման եւ միջուկային ու ճառագայթային անվտանգության երաշխիքների ապահովման պահանջներին համապատասխան,

միջազգային պայմանագրերով սահմանված պարտավորությունների արդյունավետ իրականացման նպատակով, որոնց մասնակից են իրենց պետությունները,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Կողմերը համատեղ գործողությունների արդյունավետ համակարգումն ապահովելու համար իրականացնում են համաձայնեցված միջոցառումներ՝ ուղղված սույն Համաձայնագրի մասնակից պետությունների ատոմային էներգետիկայի կայուն զարգացմանը, եւ խթանում են ատոմային էներգիան

խաղաղ նպատակներով օգտագործելու՝ ԱՊՀ շրջանակներում ստորագրված միջազգային պայմանագրերի եւ ԱՊՀ բարձրագույն մարմինների ընդունած որոշումների իրականացումը:

ՀՈԴՎԱԾ 2

Կողմերն օժանդակում են ատոմային էներգիան խաղաղ նպատակներով օգտագործող օբյեկտների (այսուհետ՝ Օբյեկտներ) կայուն գործառնությանը եւ անվտանգության ամրապնդման ապահովմանը, միջուկային վթարների կանխարգելման նպատակով համատեղ միջոցառումների իրականացմանը, արտակարգ իրավիճակներում Օբյեկտների գործունեության հուսալիության պահպանման նպատակով փոխօգնության կազմակերպմանը:

Կողմերը փոխգործակցում են ազգային նորմերի եւ օրենքների մերձեցման հարցերում, որոնք նպաստում են Օբյեկտների միջուկային եւ ճառագայթային անվտանգության ապահովմանը, հաշվի առնելով Ատոմային էներգետիկայի միազգային գործակալության չափանիշները եւ սույն Համաձայնագրի մասնակից պետությունների միջազգային պարտավորությունների կատարումը:

ՀՈԴՎԱԾ 3

Կողմերը, հաշվի առնելով Ատոմային էներգիայի միջազգային գործակալության եւ սույն Համաձայնագրի մասնակից պետությունների միջազգային պարտավորությունները, նպաստում են ատոմային էներգիան խաղաղ նպատակներով օգտագործելու բնագավառում նորմատիվ իրավական եւ նորմատիվ տեխնիկական կարգավորման համակարգի զարգացմանը եւ միջոցներ են ձեռնարկում անվտանգության, ստանդարտացման, համապատասխանության գնահատման եւ չափագիտության ապահովման միասնական մոտեցումներ մշակելու ուղղությամբ՝ Օբյեկտների հուսալի ու անվտանգ գործառնության եւ սույն Համաձայնագրի մասնակից պետությունների համագործակցության բարենպաստ պայմանների ստեղծման նպատակով:

Կողմերը նպաստում են Օբյեկտների տեղակայման, նախագծման, կառուցման, շահագործման, շահագործման հանձնելու եւ շահագործումից հանելու ընթացքում անվտանգության նորմերի եւ կանոնների մշակման եւ մերձեցման գործունեության համակարգմանը, դրանց համար սարքավորումների նախագծման եւ պատրաստման, ինչպես նաեւ նորմերի եւ կանոնների տեղայնացման ու ներդրման համար մեթոդական ուղեցույցների մշակմանը:

Կողմերը սույն Համաձայնագրի մասնակից պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում են մտավոր սեփականության օբյեկտների իրավական պաշտպանության միջոցներին հետեւելը, այդ թվում՝ գաղտնիության եւ համապատասխան բնույթի տեղեկատվության գաղտնիության ապահովումը:

ՀՈԴՎԱԾ 4

Կողմերը համակարգում են՝ փոխգործակցությունը համատեղ հարցերի լուծման ժամանակ՝ կապված արտակարգ իրավիճակներում գործողությունների հետ, միջուկային եւ ճառագայթային անվտանգության

պահանջների պահպանումը ուրանի հանքավայրերի մշակման, միջուկային վառելիքի մշակման, ռադիոակտիվ թափոնների կառավարման եւ սույն Համաձայնագրի մասնակից պետություններում ճառագայթահատոտված տարածքների վերականգնման միջոցառումների իրականացման դեպքերում:

ՀՈԴՎԱԾ 5

Կողմերը նպաստում են Համաձայնագրի մասնակից պետությունների՝ տեխնոլոգիական եւ գիտատեխնիկական բազայի զարգացմանը, խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում նոր տեխնոլոգիաների եւ նորարարությունների ներդրմանը՝ հաշվի առնելով դրանց գերակայությունը եւ հնարավոր ներուժը տնտեսության արդիականացման բնագավառում:

Կողմերը զարգացնում են համագործակցությունը գիտատեխնիկական հետազոտությունների եւ մշակումների, համատեղ գիտահետազոտական եւ փորձարարանախագծային աշխատանքների իրականացման, տեխնիկական փաստաթղթերի եւ գիտատեխնիկական տեղեկատվության փոխանակման բնագավառներում՝ ըստ Համաձայնագրի մասնակից պետությունների օրենսդրության:

Կողմերը, համաձայն սույն Համաձայնագրի մասնակից պետությունների՝ միջուկային զենքի չտարածման միջազգային պարտավորությունների, փոխգործակցություն են իրականացնում միջուկային վառելիքի եւ ատոմային էներգետիկայի համալիր ցիկլի, այդ թվում՝ ուրանի հանքավայրերի մշակման, միջուկային վառելիքի պատրաստման, ռադիոակտիվ թափոնների անվտանգ կառավարման, այդ թվում՝ օգտագործած իոնիզացնող ճառագայթման աղբյուրների, դրա բաղադրիչների եւ բաղադրամասերի, օգտագործած միջուկային վառելիքի վերամշակման, ռադիոակտիվ թափոնների կառավարման նպատակով միջուկային տեղակայանքների եւ օբյեկտների նախագծման, կառուցման եւ անվտանգ շահագործման, տեխնոլոգիական մշակումների եւ լուծումների զարգացման, համատեղ միջկառավարական երկկողմ ու բազմակողմ նախագծերի, միջոցառումների եւ ծրագրերի մշակման եւ իրականացման բնագավառներում՝ ուղղված համագործակցության արդյունավետության բարձրացմանը:

ՀՈԴՎԱԾ 6

Կողմերը նպաստում են ատոմային էներգիայի խաղաղ նպատակներով օգտագործման բնագավառում մտավոր սեփականության կառավարման համակարգի զարգացմանը, ապահովում են գիտելիքների պահպանման եւ կառավարման բնագավառներում փոխգործակցությունը, տեղեկատվական համակարգերի ստեղծումը ու զարգացումը համապատասխան տեղեկատվական ռեսուրսների ձեւավորման եւ փոխանակման ճանապարհով: Մտավոր սեփականության կառավարում ասելով հասկանում ենք կազմակերպչական եւ համակարգման գործընթացների ամբողջություն, որն ուղղված է փոխանակման գործընթացի մեջ ներգրավված նյութի նկատմամբ հեղինակային իրավունքի ամրագրման, հաստատման, ձեռքբերման, փոխանցման, պահպանման եւ այլ կազմակերպչական եւ ընթացակարգային գործընթացներին:

ՀՈԴՎԱԾ 7

Կողմերը փոխգործակցում են Օբյեկտները շահագործող կազմակերպություններին բարձր որակավորում ունեցող կադրերով ապահովելու ընդհանուր մոտեցումների մշակման հարցերում, նպաստում են համատեղ գիտական եւ տեխնիկական պատրաստման իրականացմանը, մասնագետների որակավորման բարձրացմանը, տեխնիկական եւ ուսումնամեթոդական ապահովման նախապատրաստմանը, այդ թվում՝ ատոմային էներգիայի խաղաղ նպատակներով օգտագործման բնագավառում՝ միջազգային ծրագրերի համագործակցության ձեւաչափով:

ՀՈԴՎԱԾ 8

Յուրաքանչյուր Կողմ նշանակում է լիազոր (իրավասու) մարմին, որին վերապահված է սույն Համաձայնագրի կատարումը, որի մասին ծանուցում է սույն Համաձայնագրի ավանդապահին՝ միաժամանակ ծանուցելով Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին:

Լիազոր (իրավասու) մարմնի գործառույթները կարող են իրականացնել նախարարությունները, գերատեսչությունները, պետական միավորումները կամ այլ կազմակերպություններ, որոնք ապահովում են ատոմային էներգիայի խաղաղ նպատակներով օգտագործման բնագավառում Կողմերի գործունեության համակարգում:

Լիազոր (իրավասու) մարմնի փոփոխման դեպքում համապատասխան կողմը 30 օրացուցային օրվա ընթացքում այդ մասին ծանուցում է սույն Համաձայնագրի ավանդապահին:

ՀՈԴՎԱԾ 9

Սույն Համաձայնագրի իրագործման նպատակով լիազոր (իրավասու) մարմինների փոխգործակցության համակարգումն իրականացվում է Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ ատոմային էներգիան խաղաղ նպատակներով օգտագործման Հանձնաժողովի կողմից:

Համատեղ նախագծերի նախապատրաստման եւ իրականացման համար լիազոր (իրավասու) մարմինները անհրաժեշտության դեպքում սահմանում են Օբյեկտների համաձայնեցված ցանկ:

ՀՈԴՎԱԾ 10

Սույն Համաձայնագիրը չի շոշափում Կողմերից յուրաքանչյուրի՝ այլ միջազգային պայմանագրերից բխող իրավունքներն ու պարտականությունները, որոնց մասնակից է իրենց պետությունը:

ՀՈԴՎԱԾ 11

Կողմերի համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ եւ լրացումներ, որոնք դառնում են սույն Համաձայնագրի բաղկացուցիչ մասը եւ ձեւակերպվում են համապատասխան արձանագրությամբ:

ՀՈԴՎԱԾ 12

Սույն Համաձայնագրի իրականացման եւ մեկնաբանման ժամանակ Կողմերի միջեւ ծագած վիճահարույց հարցերը լուծվում են շահագրգիռ Կողմերի միջեւ՝ խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով կամ Կողմերի կողմից համաձայնեցված այլ ընթացակարգերով:

ՀՈԴՎԱԾ 13

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրած Կողմերի՝ դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին երրորդ ծանուցումն ավանդապահի ստանալու օրվանից 30 օր հետո:

Անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն ավելի ուշ կատարած Կողմերի համար սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան փաստաթղթերն ավանդապահի ստանալու օրվանից 30 օր հետո:

ՀՈԴՎԱԾ 14

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո բաց է ԱՊՀ յուրաքանչյուր մասնակից պետության միանալու համար՝ այդ մասին համապատասխան փաստաթուղթը ավանդապահին փոխանցելու միջոցով:

Միացող պետության համար Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում միանալու մասին փաստաթուղթն ավանդապահի ստանալու օրվանից 30 օր հետո:

ՀՈԴՎԱԾ 15

Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով:

Կողմերից յուրաքանչյուրն իրավասու է դուրս գալու սույն Համաձայնագրից՝ իր այդպիսի մտադրության մասին գրավոր ծանուցում ուղարկելով ավանդապահին ոչ ուշ, քան դուրս գալուց վեց ամիս առաջ, կարգավորելով սույն Համաձայնագրի գործողության ժամանակ առաջացած պարտավորությունները:

Կատարված է Մինսկ քաղաքում 2013 թվականի մայիսի 31-ին, մեկ բնօրինակով, ռուսերենով: Սույն Համաձայնագրի բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության գործադիր կոմիտեում, որը սույն Համաձայնագիրն ստորագրած յուրաքանչյուր պետության կուղարկի դրա հաստատված պատճենը:

Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2014թ. հունիսի 28-ին